ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

17 Հունվարի 2018 թվականի N 5 - Ա

2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՍՏ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 08-ի <<Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին>> N ՀՕ-224-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1400-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրության 12-րդ կետի <<դ>> ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ՝

1. Հաստատել 2018 թվականի ընթացքում ըստ ոռոգման համակարգի կազմակերպությունների առողջացման նպատակով աջակցության չափաքանակները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. Հունվարի 17

Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության էներգետիկ
ենթակառուցվածքների և բնական պաշարների
նախարարության ջրային տնտեսության պետական
կոմիտեի նախագահի 2018 թվականի

_____ _____-ի N_____-Ա հրամանի

ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՍՏ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

Հ/Հ	Անվանումը	Գումարը (հազ. դրամ)
1	<<Ջրառ>> ՓԲԸ	489,800,459
2	<<Երևան>> ՋՕԸ	25,000,000
3	<<Արտաշատ>> ՋՕԸ	80,000,000
4	<<Արմավիր>> ՋՕԸ	95,000,000
5	<<Շենիկ>> ՋՕԸ	25,000,000
6	<<Արագածոտն>> ՋՕԸ	35,199,541
Ընդամենը		**750,000,000**